ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«02» մարտի 2017 թվականի № 28-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 11.11.2016-ի գրությունը, <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 15.11.2016թ-ի թիվ Ֆ-339/16 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 09.01.2017թ-ի թիվ /2/02.1/2002 գրությունը և <ԷԼԵՆ> ԱԿ-ի 08.11.2016թ-ի թիվ 301 դիմումը՝

Հրամայում եմ

1. <ԷԼԵՆ> ԱԿ-ին տրամադրել հանքային իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:
2. Ուժը կորցրած ճանաչել՝ <ԷԼԵՆ> ԱԿ-ի ՀՀ Կոտայքի մարզի Էլենի լիթոիդային պեմզայի հանքավայրի շահագործման համար, 2013 թվականի ապրիլի 10-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/430 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-430 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-430 պայմանագիրը:
2. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝
- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերության ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ